



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Համայնքների աղքատության հաղթահարման կիրառական մոտեցումներ



EURASIA
PARTNERSHIP
FOUNDATION



Հրանտ մաթեոսյան
HRANT MATEOSSIAN FOUNDATION

**Այս հրապարակումը պատրաստվել է վրոպական միության ֆինանսական աջակցությամբ:
Բովանդակության համար պատասխանատվություն է կրում հեղինակի ՀՌԿԿ-Հայաստանը, և
պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:*

Ծրագրի նկարագիր

Ծրագրի գործընկերներ`

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ-Հայաստան),
Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (ՏԶՀԿ),
Եվրասիա համագործակցություն հիմնադրամ (ԵՀՀ),
Մաթևոսյան հիմնադրամ

Տևողությունը` 36 ամիս

Ծրագրի բյուջեն` 616,132 եվրո

ԵՄ ֆինանսավորում` 554,519 եվրո

Վայրը` Հայաստան (Լոռի, Շիրակ, Տավուշ)

Ծրագրի նպատակները

Ընդհանուր նպատակը՝ Նվազեցնել Հայաստանում բազմաչափ աղքատությունը:

- **Հատուկ նպատակ 1.** Հայաստանում բազմաչափ աղքատության պատճառների և հետևանքների կատարելագործված ըմբռնում:
- **Հատուկ նպատակ 2.** Աղքատության/անհավասարության վերաբերյալ հանրային քննարկումները վերսկսելու և աղքատության արմատական պատճառները հաղթահարելու նախաձեռնություններով հանդես գալու համար քաղաքացիական հասարակության հնարավորությունների ընդլայնում:
- **Հատուկ նպատակ 3.** Բարելավված քաղաքական երկխոսության և աղքատության հաղթահարման նպատակով քաղաքացիական հասարակության ու խոցելի խմբերի ներգրավում համայնքային նախաձեռնություններում:

Թիրախային խմբեր/շահառուներ

- Համայնքներ (հասարակություն) Լոռիում, Շիրակում և Տավուշում,
- Տեղական ինքնակառավարման մարմիններ (ՏԻՄ) Լոռիում, Շիրակում և Տավուշում,
- Տեղական ՔՀԿ-ներ Լոռիում, Շիրակում և Տավուշում,
- Հայկական հետազոտական կազմակերպություններ, որոնք զբաղվում են և հետաքրքրված են աղքատության հետազոտությամբ,
- ՀՀ կառավարություն (Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Ազգային վիճակագրական կոմիտե, մշակութային և կրթական համայնքային հաստատություններ, (համայնքային մշակույթի տներ, թանգարաններ, արվեստի դպրոցներ, գրադարաններ և այլն), Զբոսաշրջության և զարգացման պետական կոմիտե):

Գործողությունների նկարագիր

• Բազմաչափ աղքատության ուսումնասիրության հետ կապված 8 գործողություններ (SO1)

- Ներառում է բազմաչափ աղքատության փորձնական ուսումնասիրություն, առկա նախաձեռնությունների գնահատում թիրախային մարզերում և աղքատության մեղմացմանն ուղղված կիրառական մոտեցումների բացահայտման գործողությունների վերջնական ստուգումը:

• 6 ՔՀԿ-ների և խոցելի խմբերի կարողությունների զարգացման, փոխհարաբերությունների հաստատման և վերապատրաստման գործողություններ (SO2)

- Կարողությունների զարգացման ծրագրերի մշակման մասին կտեղեկացվի բազմաչափ աղքատության նախնական հետազոտական գործողությունների միջոցով:
- Ներառում է քաղաքականության մշակումը և շահերի պաշտպանությունը, բյուջեի ձևակերպումը և մոնիտորինգը, խոցելիության մեղմացումը և ընդհանուր աղքատության և խոցելիության իրազեկումը:

• 5 աղքատության միջամտության և մոբիլիզացիոն գործողություններ (SO3)

- Միջամտության գործողությունները կներգրավեն կարողությունների զարգացման գործողությունների մասնակիցներին:
- Գործունեությունը ներառում է սոցիալական ձեռնարկությունների ենթածրագրեր և քաղաքականություն մշակելիս շահերի պաշտպանություն:

Ակնկալվող արդյունքներ

- Աղքատության մեղմացման կիրառական մոտեցումների բացահայտում հիմնված բազմաչափ աղքատության ուսումնասիրության և միջամտության գործողությունների վերջնական գնահատման վրա:
- Աղքատության և խոցելիության մեղմացման համար անհրաժեշտ ռազմավարությունների և ծառայությունների ըմբռնում:
- Բարելավված կարողություններ երեք մարզերում ՔՀԿ-ների և համայնքի այլ անդամների շրջանում խոցելիության պատճառներն ու հետևանքները մեղմելու համար քաղաքականության մեջ ներգրավման, շահերի պաշտպանության և սոցիալական նախաձեռնությունների միջոցով:
- Գործողությունների համար մշակված գործիքներով, Հայաստանում հետազոտական հաստատությունների կողմից բազմաչափ աղքատությունը չափելու կատարելագործված կարողություն: